ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ

ԱՆՁԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՍՈՑԻԱԼ–ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԻՑ

Հոդվածում ներկայացված է անձի կրոնական նույնականացման սոցիալ–հոգեբանական դիտարկման առանձնահատկությունները, խնդրի ուսումնասիրման մեթոդոլոգիական հիմքերը և հեռանկարները: Խնդիրը լուսաբանվում է անձի սոցիալական նույնականացման բնորոշման միջոցով, որտեղ կարևորվում են սոցիալական միջավայրում անձի սոցիալ–հոգեբանական դրսևորման եղանակները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ կրոնական նույնականացում, սոցիալական նույնականացում, էթնիկ ինքնություն, հաղորդակցում, սոցիալական միջավայր, հոգեբանական տարածություն:

Կրոնական պատկերացումների ժամանակակից դրսևորումները չափազանց հարուստ են և բազմազան: Դրանց պատմականորեն ձևավորված, սերնդեսերունդ փոխանցված արտահայտությունները յուրովի արտահայտում են աշխարհի մասին անձի ընկալումները, զգացմունքներն ու վերաբերմունքը: Նրանք վեր են հանում մտածելակերպի այնպիսի խորքային շերտերը, որոնք ստացել են հասարակական որոշակի արձագանք և ներառվել են հասարակության աշխարհայացքային դրսևորումների մեջ: Կրոնական նույնականացման հասկացութային շրջանակը սերտ կապերով կապված է հարակից գիտությունների նվաճումների հետ: Ուստի, անձի կրոնական նույնականացման սոցիալ–հոգեբանական արտահայտությունների պատշաճ ուսումնասիրումը կարելի է իրականացնել հարակից մի քանի գիտությունների շրջանակներում, որոնք այս կամ այն կերպ առնչվում են վերը նշված թեմային՝ սոցիալական հոգեբանության, սոցիոլոգիայի, ազգագրության, լեզվաբանության և այլն՝ քաղելով նրանցից կրոնականության սոցիալական հայեցակետերը:

Կրոնական նույնականացման երևույթը՝ լինելով անձի սոցիալական նույնականացման ձևերից մեկը, նախկինում գրեթե չի ընդգրկվել սոցիալ–հոգեբանական ուսումնասիրության

շրջանակներում: Պատճառները կարող ենք փնտրել թեև ինչպես խնդրի ուսումնասիրման բարդության, այնպես էլ՝ թեմայի միջդիսցիպլինար բնույթի մեջ: Այժմ հոգեբանության մեջ նկատելիորեն աճում է հետաքրքրությունը խնդրի վերաբերյալ [6;9, էջ 70–114.]: Քննելով այն սոցիալ–հոգեբանության դաշտում, ուրվագծվում է հասարակական կարծիքը և պատկերվում որպես հասարակության հետ անձի հաղորդակցման եղանակներից մեկը [2, էջ 256]:

«Նույնականացման» հասկացությունը կրում է միջդիսցիպլինար բնույթ: Նրա ուսումնասիրության շրջանակը ձևավորվել է ընդհանուր հոգեբանական և սոցիալ–հոգեբանական հետազոտությունների շնորհիվ, որոնք ներկայացված են Է.Էրիքսոնի, Զ.Ֆրեյդի, Կ.Գ.Յունգի [21;17;18;22] և այլոց կողմից: Նույնականացման հետագա ուսումնասիրություններն իրենց զարգացումն են գտել միջխմբային հարաբերությունների հոգեբանության մեջ: Նշանակալի ներդրում է կատարել սոցիալական նույնականացման կոնցեպտը Ա.Թեջֆելի կողմից և Ջ.Թերների ինքնակատեգորիզացիայի տեսությունը [25]:

Փաստորեն, խոսքը գնում է անձի սոցիալապես կարևորվող կրոնական արտահայտությունների մասին, որոնք բնորոշ են տվյալ հասարակությանը: Դրանց առաջին անգամ անդրադարձել է Մ.Էլիադեն՝ որպես անձի սրբազան արտահայտությունների[20]:

Ինչպես տեսնում ենք, անձի սոցիալական և, մասնավորապես, կրոնական նույնականացման երևույթի լուսաբանումը հոգեբանական գրականության մեջ հանգում է, ընդհանուր առմամբ, անձի՝ հասարակության հետ փոխգործողությունների բացահայտմանը: Այն կարող է ներկայացվել որպես հասարակության մեջ անձնային զարգացման դրսևորումներից մեկը: Դատելով խնդրի միջդիսցիպլինար բնույթից, կարող ենք փաստել բազմաթիվ գիտական վկայությունների մասին, որոնք այս կամ այն կերպ առնչվում են կրոնական նույնականացման սոցիալ–հոգեբանական հայեցակետին:

Սոցիալ–հոգեբանական հայեցակետից կարևորվում են կրոնի այնպիսի դրսևորումները, որոնք լինելով անձի ինքնաարտահայտման միջոց, արտացոլում են հասարակության էթնոհոգեբանական գոյության և ինքնության յուրահատկությունը: Կրոնական նույնականացման դրսևորումներն ի հայտ են գալիս անձի սոցիալականացման պրոցեսների հետ զուգընթաց՝ որպես սեռա–տարիքային, սոցիալական, հոգևոր և զարգացման այլ չափանիշների հանրագումար: Այդ գործընթացի արդյունքում անձը ձեռք է բերում համապատասխան սոցիալական դեր, որի կատարման համար կիրառում է տարբեր մոտեցումներ և դիրքորոշումներ: Անձի կրոնական նույնականցման և՛ սոցիալական, և՛ անհատական երկակի բնույթը բացահայտելու համար անհրաժեշտ է վեր հանել հասարակության առասպելաբանական աշխարհայացքը, որն ընկած է ցանկացած կրոնական մտածելակերպի հիմքում: Ըստ առասպելի սոցիոլոգիական սահմանման՝ առասպելը կրոնական հավատքի հիմնական դրույթների ամբողջություն է, որն արտահայտվում է որոշակի պատմությունների մեջ: Եվ այդ պատմությունները երբեք չեն ընկալվում որպես ուղղակի անցյալում կատարվածի նկարագրություն: Նույնիսկ մակերեսային հայացքը ցույց է տալիս, որ առասպելը որոշ առումով կրոնական դրույթների բացահայտումն է [13, էջ 278]: Դա հրաշքային իրադարձության «իրական» նկարագրություն է, որն որոշում է աշխարհի կառուցվածքը և բարո-

յական արարքի էությունը [13, էջ 281]:

Այդ պատճառով, բացահայտելու համար անձի կրոնական նույնականացման խորին շերտերը, անհրաժեշտ է զուգահեռներ տանել հասարակության առասպելական մտածելակերպի առանձնահատկությունների հետ: Ուստի, այդ խնդրի լուսաբանմանն անուղղակի կերպով անդրադարձել են մի շարք մարդաբան–մշակութաբաններ: Հայտնի մարդաբան Բ.Մալինովսկին հետևյալ կերպ է անդրադառնում կրոնի սոցիալական կողմին: Նա կրոնի՝ որպես ամբողջություն, առանձնահատկություններից է համարում պաշտամունքների տոնական և հասարակական բնույթը: Նա գտնում է, որ պարզունակ հասարակություններում պաշտամունքի հասարակական բնույթը, կրոնական հավատալիքի և սոցիալական կազմակերպության փոխօգնությունը նույնքան են արտահայտված, որքան զարգացած հասարակություններում [13, էջ 55]:

Անձի կրոնական նույնականացումն արտահայտում է ինչպես զուտ անհատական ծիսա–պաշտամունքային վարքագիծը, այլ կերպ ասած՝ անհատի վարքի «կրոնական» բաղադրիչը, այնպես էլ՝ այդ կրոնականի սոցիալական դրսևորումները՝ «կոլեկտիվը»: Սա կրոնական մտածելակերպի յուրահատկություններից մեկն է, երբ կոլեկտիվ վարքագիծը /ուխտագնացություն, եկեղեցական տոնակատարություններ և այլն/ համատեղվում է անհատական վարքագծով /անձի կրոնական ապրումները, պատկերացումները և այլն/:

Ընդհանուր առմամբ, տվյալ խնդրի շրջանակներում կարևորություն են ներկայացնում հետևյալ առանցքային հարցադրումները. ինչպե՞ս է անձը ճանաչում իր միջավայրը, ի՞նչ գլխավոր համեմատականներ է տանում հարազատ և օտար միջավայրերի միջև, ո՞ր չափանիշների շնորհիվ է առանձնացնում կրոնական արտահայտությունները հասարակությունում, և ինչպե՞ս է վերաբերվում նրանց: Այսպիսով, կրոնական նույնականացման երևույթի մեջ խտացված կերպով կարող են արտահայտվել անձի էթնո–սոցիալական նույնականացման յուրահատկությունները, որոնք էլ կվկայեն ազգային ինքնության և գիտակցության տարբեր կողմերի մասին: Անձի կրոնական նույնականացման ուսումնասիրության խնդիրը, ուրեմն, որոշակի չափով առնչվում է անձի՝ շրջակա աշխարհի հետ հաղորդակցվելու հարցին: Ուստի, ունի և՛ գիտական, և՛ կիրառական հսկայական նշանակություն: Այն հանդես է գալիս որպես անձի սոցիալ–հոգեբանական զարգացման, հասարակության մեջ ինտեգրվելու և ինքնառեալիզացիայի հզոր լծակ [12, էջ 16, 25–26]: Անդրադառնալով անձի կրոնական նույնականացման սոցիալ–հոգեբանական մանրամասներին՝ ուղղակի-որեն վեր են հանվում հաղորդակցման ուսումնասիրման բազմաբնույթ հարցադրումները: Ա.Ն.Լեոնտևը այսպես է գրում հաղորդակցման կարևորության մասին. «Անձի վերաբերմունքն իրեն շրջապատող առարկայական աշխարհի նկատմամբ միշտ միջնորդավորված է մարդկանց և հասարակության նկատմամբ իր վերաբերմունքով» [11, էջ 364.]: Հնարավոր չէ ի նկատի չունենալ այս պարագան, քանի որ նպատակահարմար չէ ուսումնասիրել մարդուն հաղորդակցման իր միջավայրից, այն սոցիալական հարաբերություններից դուրս, որոնք նրա ձևավորման հիմնական պայմաններն են: Կոլեկտիվի՝ որպես հաղորդակցման միջավայրի, ուսումնասիրության կարևորությունը նշել է նաև Վ. Մ. Բեխտերևը, որի համոզմամբ կոլեկտիվը ոչ թե արգելակում, այլ հակառակը, նպաստում է անձի զարգացմանը

[1]: Այսպիսով, սոցիալական հոգեբանության գլխավոր խնդիրներից մեկը հաղորդակցության խնդիրն է: Հետաքրքրությունը դրա նկատմամբ որոշվում է այն հսկայական դերով, որ այն կատարում է անձի կայացման և զարգացման գործում [7, էջ 189]: Անմիջական և միջնորդավորված հաղորդակցման ընթացքում մարդը ստանում է իրեն շրջապատող աշխարհի մասին գիտելիքներ, յուրացնում է մշակութային և սոցիալական այն արժեքներն ու նորմերը, որոնք ստեղծված են մարդկության զարգացման պատմական ընթացքում: Այս կերպ կառուցված սոցիալական միջավայրը մարդկանց հասարակական–պրակտիկ գործունեության միջավայրն է: Նրանում գոյությունն արդեն իսկ ենթադրում է համատեղ գործունեության մասնակցություն [3, էջ 51]:

Խոսելիս անձի կրոնական նույնականացման մասին՝ մենք նույնպես առնչվում ենք սոցիալական միջավայրում կատարվող հաղորդակցման տարբեր ձևերի հետ: Դրանց յուրահատկությունը կայանում է նրանում, որ անձն ունի հաղորդակցության երկակի բնույթ. նա հաղորդակցվում է ինչպես իրեն շրջապատող սոցիալական միջավայրում գտնվող այլ անձանց հետ, այնպես էլ պատկերցումային մակարդակում՝ գերբնական աշխարհի հետ, որն այդ միջավայրի խորհրդանշանային արտացոլումն է: Անձը ապրում և գործում է հասարակության ներքո: Հայտնի է, որ նրա գործունեությունը կրում է հասարակական բնույթ, պայմանավորվում է բազմաթիվ միջնորդավորված և անմիջական կապերով: Դրանք զարգանում են այն սոցիալական հանրույթներում և այն մշակութային միջավայրում, որոնցում ընդգրկված է տվյալ գործունեության սուբյեկտը: Գոյություն չունի հասարակությունից բացառապես մեկուսացված գործունեություն, ինչպես նաև՝ մեկուսացված անձ: Այս դրույթը հանգում է անձի՝ սոցիալական միջավայրում տարածական մտածողության ձևավորմանը, այլ էթնիկ խմբերի հետ համեմտության և սեփական էթնոկրոնական ինքնատիպության գիտակցմանը:

Մի շարք հեղինակներ հատուկ ուշադրության են արժանացրել անձի տարածական մտածողության կայացման գործում սոցիալական ինքնության հարցադրումներին, որոնք նույնպես անուղղակի կերպով մատնանշում են անձի էթնիկ ինքնության զանազան դրսևորումները [4, էջ 103–112;5, էջ 60–68;10, էջ 48–66]:

Անձի նույնականացման հոգեբանական ուսումնասիրության հարցում ներդրում է կատարել Ս.Կ.Նարտովա–Բոչավերը: Նա անդրադարձել է անձի սոցիալական նույնականացման հարցերին անձի հոգեբանական տարածության բնորոշման շրջանակներում:

Հետևելով անձի հոգեբանական տարածության Ս.Կ.Նարտովա–Բոչավերի ձևակերպմանը՝ մենք այն նշանակում ենք որպես «կեցության սուբյեկտիվորեն կարևորվող ձև», որը բնորոշում է անձի ակտուալ գործունեությունը [14, էջ 27–36]: Ըստ Վ.Ի.Սլոբոդչիկովի, հոգեբանական տարածությունը ներառում է ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական երևույթների մի ամբողջ համալիր, որոնց հետ անձն իրեն նույնականացնում է: Այն ներկայացված է վեց չափանիշների միջոցով, որոնց դեպրիվացիան վկայում է հոգեբանական տարածության սահմանների խախտման մասին [16]: Փաստորեն, հոգեբանական տարածության եզրույթը, իր մեջ ներառելով անձի սոցիալ–հոգեբանական հատկանիշները, ունակ է արտահայտելու նաև անձի էթնոկրոնական նույնա-

կանացման յուրահատկությունները:

Այսպիսով, կարող ենք վկայել, որ անձի կրոնական նույնականացումը՝ ներկայացվելով հոգեբանական տարածության կազմակերպման շնորհիվ, կարող է փոխկապակցված լինել անձի հոգեբանական տարածության դեպրիվացիայի աստիճանով: Սոցիալ–հոգեբանական առումով անձի հոգեբանական տարածությունը ներկայանում է որպես նշանային համակարգ [19, էջ 3–13; 10, էջ 48–55]: Անձի կրոնական գործունեությունը հաճախ անհասկանալի ու տարօրինակ է թվում այլ էթնիկ խմբերի համար: Նախնական հարցման արդյունքները ցույց են տալիս, որ մարդիք չեն էլ ձգտում բացատրել իրենց կրոնական գործունեության մանրամասները, այլ ներկայացնում են դրանք որպես այդպիսին [24; տես՝ 8, էջ 75–82]: Այդ պատճառով անձի կրոնական նույնականացման ներկայությունը հաղորդակցման ընթացքում կրում է խիստ նշանային բնույթ:

Վերը ներկայացված դրույթները պահանջում են խորը, բազմակողմանի ուսումնասիրություն, որն անհրաժեշտ է ամրագրել փորձարարական հետազոտության լայն դաշտով: Այն հնարավորություն կտա հստակեցնել ներկայացված չափանիշների ձևակերպումները և կիրառելի դարձնել անձի սոցիալական նույնականացման ուսումնասիրության ասպարեզում:

Սոցիալ–հոգեբանական հայեցակետից անձի կրոնական նույնականացման դիտարկումը անվերապահորեն ենթադրում է սոցիալական խմբերում անձի ներկայացուցչականությունը: Դրանցից առանձնացվում է էթնիկ խումբը իր կայունության և դրսևորման այլ հատկանիշների շնորհիվ: Անձի կրոնական հատկանիշներն արտացոլվում և որակավորվում են շրջապատում իրենց համապատասխան ընկալման տեսակետից: Այլ խոսքերով, անձի կրոնական նույնականցման սոցիալ–հոգեբանական քննությունը ուղղակիորեն վերաբերում է էթնիկ ինքնության դրսևորման մանրամասներին: Ուստի, անձի կրոնական նույնականացման առանձնահատկությունների լուսաբանումը՝ որպես առանձին ուսումնասիրության առարկա, կարիք ունի տեսական և մեթոդաբանական մոտեցումների ճշգրտմանն ու ներկայացմանը:

Խնդրի հետազոտման մեթոդաբանական մոտեցումները կարելի է ենթարկել տարբեր դասակարգումների: Դրանք կախված են ուսումնասիրության նպատակներից և նրանց լուծման կոնցեպտուալ դիրքորոշումներից:

Անձի կրոնական նույնականացման կոնցեպտը տիրապետում է բազմաթիվ հնարավորություններով, որոնք թույլ են տալիս մեկնաբանել տարբեր սոցիալական կապերը և անհատների փոխհարաբերությունները: Ընդգրկվելով սոցիալական նույնականացման եզրույթի մեջ, այն տալիս է անձի սահմանումը խմբային հասկացությունների միջոցով այնպես, որ անձը կարողանում է իրեն նկարագրել խմբի մեջ ներգրավվելու շնորհիվ: Անձի ներ– և միջ–խմբային արտահայտությունների քննությունը հանգեցնում է կրոնական հատկանիշի դիտարկմանը որպես էթնիկ ինքնության ուսումնասիրության մեթոդաբանական սկզբունք:

Անձի կրոնական նույնականացումն ունի մեծ նշանակություն էթնիկ ինքնության արտահայտության համար: Սոցիալ–հոգեբանական հայեցակետից այն դիտարկելու համար կարող են անցկացվել միջմշակութային համեմատություններ այլ էթնիկ խմբերի էթնիկ ինքնությունների դրսևորումների հետ: Կարող ենք փաստել, որ անձի կրոնա-

կան նույնականացումը ստանում է էթնիկ ինքնության կայուն հատկանիշ գերազանցապես այն դեպքում, երբ անձը համեմատում է սեփական խմբի հատկանիշները այլ էթնիկ խմբի հետ: Այդ դեպքում օտար խումբը ներկայացվում է որպես այլ, «օտար» հավատք ունեցող մի խումբ՝ ի դեմս յուրայինների խմբի, որոնց դավանանքի նկատմամբ վերաբերմունքը կրում է էթնոներկայացուցչական և էթնոպահպան բնույթ:

Կրոնական նույնականացման ներկայությունը էթնիկ ինքնության կառուցվածքում կարող է մասնակիորեն պայմանավորված լինել տվյալ հասարակության կոնսերվատիվ բնույթով, մասամբ էլ՝ այն հանգամանքով, որ կրոնական նույնականացման արդյունքում ձևավորվում են էթնիկ ինքնության որոշակի արժեքները և, խոսելիս ազգային, էթնիկ արժեքների մասին՝ անձը անպայման հղում է կատարում կրոնական նույնականացման փաստին:

Կրոնական նույնանացման գործառնությունը էթնիկ ինքնության մեջ պայմանավորված է ներքին և արտաքին մի շարք գործոններով: Ներքին գործոնն ի հայտ է գալիս անձի էթնիկ յուրօրինակությունն արտահայտելու և այլ էթնիկ խմբերին ներկայացնելու ժամանակ: Արտաքին գործոնը կապված է միջէթնիկ հարաբերությունների պատմականորեն ձևավորված գործընացներով և համաշխարհային գլոբալիզացիայի միտումներով, երբ փոքր էթնիկ խմբերը ձգտում են ընդգրկվել համաշխարհային կրոնական /օր., քրիստոնեական կամ մահմեդական աշխարհ/ կամ այլ խմբավորումների մեջ [23, էջ 201]:

Ուստի,հայերին՝ որպես փոքր էթնիկ խումբ, բնորոշ է ինտեգրման երկու ոլորտ՝ աշխարհով մեկ սփռված հայկական սփյուռքի և, ընդհանուր առմամբ, քրիստոնեական աշխարհի հետ նույնացումը: Այսպես, հայերն իրենց ազգային պատկանելությունը ցուցադրում են իրենց քրիստոնյա առավել ևս՝ աշխարհում առաջին քրիստոնյա, լինելով: Դրա մեկ այլ վկայություն է հաճախ հանդիպող «հայերը՝ քրիստոնյա ազգ» արտահայտությունը, ուր պարզ երևում է կրոնական և էթնիկ ինքնությունների նույնացումը:

Ամփոփելով վերը նշված գիտական մոտեցումների ընտրանին, կարող ենք վկայել անձի կրոնական, իսկ լայն իմաստով, սոցիալական ինքնության վերաբերյալ գիտական մտքի աստիճանական զարգացման մասին: Նույնականացման եզրույթը՝ ձևավորվելով անձի ընդհանուր հոգեբանության շրջանակներում, նախ իր արտահայտությունն է գտել միջխմբային հարաբերությունների հոգեբանության մեջ, այնուհետև զարգացել է շնորհիվ գիտակցության փոփոխված վիճակների ուսումնասիրությունների և ընդգրկվել սոցիալ–հոգեբանական հետազոտությունների շրջանակում որպես սոցիալական նույնականացման երևույթ:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 09. 10.2013 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Бехтерев В. М.,** Данные эксперимента в области коллективной рефлексологии.–В кн.: Новое в рефлексологии и физиологии нервной системы, Л.–М., 1925, –336 с.
2. **Бехтерев В. М.,** Избранные работы по социальной психологии, М., 1994, –400 с.
3. **Бусс Н.А.,** Семантическая основа взаимопонимания. Семантика и социальная психология, Фрунзе, 1976, –154 с.
4. **Величковский Б. М., Блинникова И.В., Лапин Е.А.** Представление реального и воображаемого пространства; Вопросы психологии, №3, 1986, М., Педагогика, 192 с.
5. **Каплунович И. Я.** Психологические закономерности развития пространственного мышления; Вопросы психологии, 1999, №1, Москва.– 128 с.
6. **Кляйн М., Айзекс С., Райвери Д., Хайманн П.** Развитие в психоанализе. Москва. 2001.
7. **Кольцова В. А.** Опыт экспериментального изучения познавательной деятельности в условиях общения.–В кн.: ред. Шорохова Е.В., Методология и методы социальной психологии, Москва, 1977. –247 с.
8. **Курбаткина Ю. В.** Процесс сепарации и индивидуации с точки зрения традиции обьектных отношений и Я–психологии,– Психология и жизнь, Москва: МОСУ, 2001, Вып. 2.
9. **Кучеренко В. В., Петренко В. Ф., Россохин А. В.** Измененные состояния сознания: психологический анализ; Вопросы психологии, 1998, № 3, М.,– 160 с.
10. **Левин К.** Теория поля в социальных науках, СПб, 2000.– 368 с.
11. **Леонтьев А. Н.** Проблемы развития психики, Москва, 1965.
12. **Леонтьев Д. А.** Самоактуализация как движущая сила личностного развития: историко–критический анализ, в кн.: Леонтьев Д. А., Современная психология мотивации, М., 2002.– 343 с.
13. **Малиновский Б.** Магия, наука и религия.
14. **Нартова–Бочавер С. К.** Понятие “психологическое пространство личности”: обоснование и прикладное значение; Психологический журнал, том 24, № 6, 2003, “Наука”, Москва,– 128 с.
15. **Никольская А. В.** Теория отражения vs конструктивизм; Вопросы психологии 2010, № 1, М., 176 стр., с. 67.
16. **Слободчиков В. И.** Ступени развития субъектности,– http://murzim.ru/nauka/psihologija/vozrastnaja–psihologija/27080–stupeni–razvitiya–subektnosti–po–vi–slobodchikovu.html/
17. **Фрейд. З.** Введение в психоанализ: Лекции. М., «Наука», 1989
18. **Фрейд. З.** Тотем и табу. Психология первобытной культуры и религии, М., 1991.
19. **Чудновский В. Э.** К проблеме соотношения “внешнего” и “внутреннего” в психологии,– Психологический журнал, 1993, т.14, № 5.
20. **Элиаде М.** Очерки сравнительного религиоведения, Москва, 1999.
21. **Эриксон Э.** Идентичность: юность и кризис,– М.: Прогресс, 1996.
22. **Юнг К. Г.** Архетип и символ, Москва, 1991.
23. **Хачатурян В. М.** 1998.История мировых цивилизаций. Москва. 1998.
24. **Խաչատրյան Ա. Գ.** Դաշտային նյութեր, 1992–1995 թթ:
25. **Tajfel, H. and Turner, J. C.** The social identity theory of inter–group behavior. In S. Worchel and L. W. Austin (eds.), Psychology of Intergroup Relations. Chigago: Nelson–Hall, 1986.

РЕЛИГИОЗНОЕ САМОСОЗНАНИЕ ЛИЧНОСТИ С СОЦИАЛЬНО–ПСИХОЛОГИЧЕСКОЙ ТОЧКИ ЗРЕНИЯ

ГЕВОРКЯН СРБУИ

Проректор по научно-учебной работе Армянского государственного университета имени Хачатура Абовяна, доктор психологических наук, профессор

ХАЧАТРЯН АННА

Соискатель кафедры развития и прикладной психологии факультета психологии и социальной педагогики Армянского государственного университета имени Хачатура Абовяна

В статье представлены особенности социально–психологического обзора религиозной идентичности личности, методологические подходы и научные прогнозы дальнейшего исследования. Проблема освещается посредством определения социальной идентичности личности, определяются социально–психологические формы выражения личности в социальной среде.

Дата представления статьи: 09.10.2013 г.

PERSON'S RELIGIOUS IDENTIFICATION FROM THE SOCIAL–PSYCHOLOGICAL PERSPECTIVE

SRBUHI GEVORGYAN

Vice–rector of ASPU of Kh. Abovyan, Doctor of Psychological Sciences Professor

ANNA KHACHATRYAN

Applicant of the chair of Development and Applied Psychology, Faculty Education Psychology and Sociology

The article presents the ways of socio–psychological investigation of a person`s religious identity and the essentials of methodology. The problem is delivered by the term of a person`s social identity, socio–psychological forms of self–expression in social surroundings are also being determined.

Article submission date 09.10.2013